

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 4-ին, շաբաթ.—Նիկիոյ Սուրբ ժողովոյն երեք հարիւր տասն և ութ հայրապետացն (325 թ.):

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբղ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 11-ին, շաբաթ.—Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս Սրբոյ Խաչին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 17-ին կատարվեց Խաչվերացի հանդիսավոր թափոր:

* * *

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատրագի կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Սեպտեմբերի 18-ին, շաբաթ.—Տօն է Խաչի:

Այսօր Ս. Գայանե վանքում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 21-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն՝ Փեփրոնեայ, Մարիեանեայ և Շուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը:

* * *

Սեպտեմբերի 26-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և «Հայր մեր»-ից առաջ բոլանդակալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 2-ին, շաբաթ.—Սրբոց եօթանասանից և երկուց աշակերտացն Քրիստոսի:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը և «Հայր մեր»-ից առաջ հալոր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վաչե ծ. վրդ. Իգնատիոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.—Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կայեցւոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մկրտիչ քհն. Երանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպս. Ածեմյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 16-ին, շաբաթ.—Սրբոց Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու:

Այսօր Ս. Գայանե վանքում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 23-ին, շաբաթ.—Սրբոց Երկոտասանից վարդապետացն՝ Ռեթէոսի, Դիոնէսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի Խուրին Ասորւոյ, Բրսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղէքսանդրացւոյն:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 24-ին, կիրակի.—Գիւտ Խաչ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 30-ին, շաբաթ.—Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը: